ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2011 թվականի N 133-Ա

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԵՋ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՍԾՏԳ-Ի ԱՇԽԱՏԱԿՑԻ /ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԵՊՔ ՎԱՐՈՂԻ/ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐԻ /ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ/ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի ,,Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին'' թիվ 728 հրամանագրի 1.2. կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի մոտ 2011 թվականի սեպտեմբերի 7-ին կայացած խորհրդակցության թիվ 07/09-06 արձանագրության 2-րդ կետի 3-րդ ենթակետի ա. պարբերության պահանջները.

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագրի մեջ ընդգրկված մարզպետարանի աշխատակազմի Իջևանի ՍԾՏԳ-ի աշխատակցի /սոցիալական դեպք վարողի/ պաշտոնի անձնագիրը /գործառույթները/՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011 թվականի սեպտեմբերի 30
Ք. Իջևան

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի
2011թ. սեպտեմբերի 30- ի
թիվ 133- Ա որոշման

Սոցիալական դեպք վարողի պաշտոնի անձնագիրը (գործառույթները)

1 . Ընդհանուր դրույթներ

Դեպքի վարումն իրականացվում է դեպք վարողի կողմից, որի յուրաքանչյուր գործողություն պետք է համապատասխանի ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքին, ՀՀ ընտանեկան օրենսգրքին, ՀՀ կառավարության ստորագրած միջազգային պայմանագրերին, ՍԾՏՄ-ի կանոնադրությանն ու այլ իրավական ակտերին:

Դեպքի վարումն իր մեջ ներառում է բոլոր սոցիալական այն ծառայությունների տրամադրման կազմակերպումը, որոնք ուղղակիորեն տրամադրվում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին, ընտանիքի անդամներին (այսուհետ՝ հաճախորդ)՝ նպատակ ունենալով բավարարել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի հիմնական պահանջմունքները, ստեղծել պայմաններ հասարակության մեջ ինտեգրվելու համար, խթանել նրանց ինքնօգնության և ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը, կանխարգելել նրանց սոցիալական մեկուսացումը, ինչպես նաև օժանդակել նրանց սոցիալական, ֆինանսական խնդիրների լուծմանը:

2.Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

2.1. Դեպք վարողն իր աշխատանքները կազմակերպում է վարչական աշխատակազմի հետ համատեղ՝ սոցիալական ծառայություններ ապահովելու նպատակով, ներառյալ ընտանեկան նպաստները:

2.2. Դեպք վարողը տիրապետում է հաճախորդի իրավունքերի պաշտպանության ոլորտի օրենսդրությանը, նրա կարողություններին՝ ուժեղ և թույլ կողմերին, առկա ռեսուրսների մասին տեղեկատվությանը:

2.3. Դեպք վարողն իր լիազորությունների շրջանակներում համագործակցում է գործող բոլոր սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների, սոցիալական ապահովության ծառայության տարածքային բաժինների, զբաղվածության տարածքային կենտրոնների, բժշկա- սոցիալական փորձաքննության հանձնաժողովների, կրթական և առողջապահական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների հետ:

2.4. Դեպք վարողը, սերտորեն համագործակցում է մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների (ընտանիքի, երեխաների և կանանց իրավունքների պաշտպանության, ինչպես նաև առողջապահության և սոցիալական ապահովության վարչություններ) հետ:

2.5. Դեպք վարողի որոշումները վերանայվում են նրա անմիջական ղեկավարի կողմից՝ դրանց Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու դեպքում:

3. Դեպք վարողի պարտականությունները

3.1. Պաշտպանել հաճախորդի իրավունքներն ու օրինական շահերը:

3.2. Ապահովել հաճախորդի ներգրավվածությունը և ակտիվ մասնակցությունը իր խնդիրների լուծման գործընթացին, որոշումների կայացմանը՝ զարգացնելով հաճախորդի սոցիալական հմտությունները և ինքնավարությունը:

3.3 Կազմել հաճախորդի սոցիալ-հոգեբանական վերականգնման (դեպքի վարման) անհատական ծրագիրը (այսուհետ՝ անհատական ծրագիր), որում ներառվում է հաճախորդի կարողությունները հզորացնելուն ուղղված միջոցառումներ՝ նրա հետ կնքելով աշխատանքների իրականացման պայմանագիր, յուրաքանչյուր կողմի իրավունքներն ու պարտականությունները և դրանց իրականացման ժամկետները:

3.4 Լիարժեք օգտագործել՝ տվյալ տարածաշրջանում առկա ռեսուրսների ցանցը (պետական և ոչ պետական) անհատական ծրագրի իրականացման նպատակով:

3.5. Ապահովել քաղաքացիների համար սոցիալական աջակցության տրամադրման հավասար հնարավորություններ, սոցիալական աջակցության մատչելիություն և համարժեքություն հաճախորդների անհատական պահանջմունքներին.

4.Դեպք վարողի գործառույթները

4.1.Դեպք վարողի գործառույթներն ուղղված են հաճախորդին հասցեական, անհատական և արդյունավետ աջակցության տրամադրմանը:

4.2.Դեպք վարողը համակարգում է անհատական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը և ուղղորդում հաճախորդին տարբեր կազմակերպություններ՝ իրենց իրավունքների մասին իրազեկման, իբչպես նաև դրանց իրացման համար:

4.3. Դեպք վարողն արձագանքում է սոցիալական աջակցության հրատապ կարիք ունեցող դեպքերին, ապահովում է առաջնային օգնություն, հավաքագրում հուսալի տեղեկատվություն, գրանցում դրանք:

4.4. Դեպք վարողը գնահատում է հաճախորդի սոցիալական կարիքները և այդ ամենը գրառում հաճախորդի հետ ունեցած առանձին հանդիպումների ժամանակ համապատասխան ձևաթղթում:

4.5. Դեպք վարողը հաճախորդի հետ միասին ճշտում է հնարավոր ռեսուրսները (պետական և ոչ պետական), որոնք կարող են օգտագործվել դեպքի վարման ընթացքում;

4.6 Դեպքի հետ կապված քննարկումներ կազմակերպելու միջոցով, ներառի բացահայտված ռեսուրսները (գործընկերներ կամ բացահայտված ՀԿ-ներ՝ կախված հատուկ կարիքներից) հաճախորդին աջակցություն ցուցաբերելիս (օրինակ՝ որոնք կարող են հաճախորդի համակերպման ցանցի մասը լինել), կրելով վերջնական և հիմնական պատասխանատվությունը դեպքի նկատմամբ (բարոյական կամ այլ կերպ՝ օրենքով սահմանված); այս հանդիպումների միջոցով, մշակի համապարփակ անհատական ծրագիր (գործողությունների պլան) հաճախորդի լիարժեք ներգրավմամբ;

4.7. Դեպք վարողն ապահովում է առկա ռեսուրսների ակտիվ մասնակցությունը հաճախորդի խնդրին համապարփակ լուծում տալու համար, հետևում է մասնակից կազմակերպությունների գործառույթների իրականացմանը և անհրաժեշտության դեպքում՝ հիշեցնում նրանց անելիքների մասին:

4.8. Դեպք վարողը հաճախորդին ուղղորդում է դեպի տվյալ սոցիալական ծառայություն տրամադրող կազմակերպություն, անհրաժեշտության դեպքում՝ երաշխավորելով դեպքի պատշաճ ներկայացումը:

4.9. Դեպք վարողը ստանձնում է միջնորդի դեր տարբեր և հաճախ միմյանց հակասող շահեր ունեցող կազմակերպությունների միջև՝ երաշխավորելով սոցիալական ցանցի անդամների միջև համագործակցություն և տեղեկատվության փոխանակում, ապահովելով հաճախորդի օրինական շահերի առաջնային դերը:

4.10. Դեպք վարողը լսում է, ըմբռնում և աջակցում հաճախորդներին՝ տրամադրելով պրոֆեսիոնալ խորհրդատվություն, զարգացնում է հաճախորդների հիմնախնդիրները ըմբռնելու և հնարավոր լուծումները գտնելու հմտությունները:

4.11. Դեպք վարողը գնահատում և ավարտում է դեպքի վարումը դրա դրական արդյունքի կամ հնարավոր լուծումների բացակայության դեպքում:

4.12. Դեպք վարողը ուշադրության կենտրոնում է պահում հատուկ կարիքներով անձանց (երեխաների) խնդիրները, որի համար կազմում է համալիր ծրագիր առողջապահության, նախադպրոցական և կրթական ծառայություն տրամադրողների ներգրավմամբ, որով երաշխավորվում է այդ երեխաների լիարժեք ներառումը հասարակություն:

4.13.Մասնակցում է դատական նիստերին.

• երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով (երեխաների հանդեպ բռնության և շահագործման դեպքերում),

• ծնողական իրավունքների սահմանափակման կամ վերականգման հետ կապված հարցերով:

5. Դեպք վարողի պատասխանատվությունը

5.1. Դեպք վարողն աշխատում է իր բոլոր գործընկերների և ղեկավարների հետ՝ հաճախորդների համար «մեկ ընդհանուր մուտք» ստեղծելու համար, իրականացնելով սոցիալական կարիքների առաջնային գնահատում, այնուհետև հաճախորդին ուղղորդում է տվյալ սոցիալական ծառայություն տրամադրող կազմակերպություն:

5.2. Դեպք վարողն ունի տարածաշրջանում գործող բոլոր սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններ և այլ ռեսուրսների մասին համապարփակ գիտելիքներ:

5.3. Դեպք վարողն այլ սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպություններ հետ մշակում է կանխարգելող ծրագրեր ուղղված համայնքներում բացահայտված ռիսկային գործոնների նվազեցմանը, կոլեկտիվ իրավունքների խթանմանը և պաշտպանությանը, համայնքի միասնությանն ու մասնակցությանը:

5.4. Դեպք վարողը սերտորեն համագործակցում է մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների հետ՝ տարածաշրջանի սոցիալական կարիքներին համապատասխան տարեկան սոցիալական գործողությունների ծրագրերի մշակման

նպատակով, տարբեր սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջև համագործակցության պայմանագրերի կնքման նախապատրաստման համար:;

5.5. Դեպք վարողն աջակցում է խնամատար ընտանիքներին, երեխաների կյանքի և դաստիարակության համար պատշաճ միջավայրի ստեղծման համար ծրագրերի կառավարման ոլորտում և հաճախորդների համար անհատական ծրագրերի մշակման միջոցառումների իրականացման կազմակերպման գործընթացում:

6.Դեպք վարողի հաշվետվողականությունը

6.1.Դեպք վարողը հաշվետու է իր անմիջական ղեկավարին հետևյալ դեպքերում.

- սոցիալական բարդ դեպքերին հրատապ արձագանքելու.
- առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների լիարժեք պաշտպանություն՝ ելնելով երեխայի լավագույն շահերից.
- յուրաքանչյուր դեպքի անհատական ծրագրերի կազմման, գործավարության, դեպքի վարման արդյունքների ձեռքբերման համար,
- յուրաքանչյուր անհատական ծրագրով ձեռք բերված համաձայանությունների պատշաճ կատարման, այդ թվում հաճախորդին:

6.2. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ համագործակցության արդյունքում, դեպք վարողը.

- ստորագրում է պայմանագիր խնամքի հաստատությունների հետ (ներառյալ խնամատար ընտանիքները) երեխաներին հաստատություններում տեղավորելու դեպքում, որում ներառվում են տվյալներ տեղավորման ժամանակահատվածի և խնամք տրամադրողների կամ ժամանակավորապես նշանակված օրինական ներկայացուցիչների պարտականությունները:

6.3. Դեպք վարողը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ խնամակալներին կամ հոգաբարձուներին պատասխանատվության կանչելու հարցում, եթե.

- խնամակալները կամ հոգաբարձուները չարաշահել են իրենց վերպահված իրավունքները կամ լքել են իրենց խնամարկյալներին.
- դեպք վարողների գնահատման արդյունքում խնամակալները կամ հոգաբարձուները ձախողել են իրենց պարտականությունների պատշաճ կատարումը: